**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

---

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 23 հունվարի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Ամալի Միքաելյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

## ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Ամալի Միքաելյանը 2012թ. հունվարի 10-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ, 233-րդ եւ 234-րդ հոդվածների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես՝ վերջինիս 18-րդ հոդվածի պահանջներին:

Գործի քննությունը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ:

1. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի կողմից ընդհանրապես անտեսված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի եւ 69-րդ հոդվածի 4-րդ մասի՝ դիմումի ընդունելիության համար պարտադիր համարվող վավերապայմանները՝ այնքանով, որքանով դիմումում բացակայում է ու ներկայացված չէ առհասարակ որեւէ հիմնավորում վիճարկվող դրույթների սահմանադրականության

վերաբերյալ: Հարկ է արձանագրել նաեւ, որ անհրաժեշտ եւ բավարար իրավաբանական փաստարկներով հիմնավորված չէ դիմողի սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտումների փաստի եւ քննության առարկա իրավանորմերի՝ Սահմանադրությանը հակասելու միջեւ պատճառահետեւանքային կապի առկայությունը:

Մատնանշված հանգամանքները հիմք են տալիս եզրահանգելու, որ տվյալ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է /նշված օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետ, 69-րդ հոդվածի 7-րդ մաս եւ ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման 8-րդ եւ 9-րդ կետեր/:

2. Բացի դրանից, առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 08.10.2008 ՍԴՈ-765 որոշումը, որով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերը ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ, 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով եւ ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

Քաղաքացի Ամալի Միքաելյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

23 հունվարի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/2-3